




ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻՒ 38

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱԹԱԹԵՐԹ

19 ՄԱՅԻՍ 1907

Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ



Ջ Ե Ն Ի Թ

ՄԵԾ ՄՐՑԱՆԱԿ ԲԱՐԻՋ, 1900

ԱՌԱՋԻՆ ՄՐՑԱՆԱԿ. — Նեոստիլի դիսարանին. 1903

ԱՐՏԱՔՈՑ ՄՐՑԱՆ. — Անդամ ժիւղի. Միլան. 1906

ԵԻՆ. ԵԻՆ. ԵԻՆ.

ԱՄԷՆ ՄԵՏԱՂԷ ԵՒ ԱՄԷՆ ՄԵՆՈՒԹԵԱՄԲ

ԸՆԴՀ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԹՈՒՐԻՈՑ ՀԱՄԱՐ

Գ. ՄԱՐԳԻՍՅԱՆ ԵՒ ԸՆԿ.

Մեծ վաճառատուն ժամացույցներու, շրթա-
ներու եւ գոհարեղէններու

ԹԻՒ 16 — ՊԱՆԶԷ-ԳԱՐՈՒ — ԹԻՒ 16

Օռոգախ-Պաք հաստատութեան ղեկավար

Ի Բերա, Կ'գանուի դոհարավաճառ՝ Տ. Տ. ԷՄԻԼԻՆՍԿԻՆ ԵՂԱՍՐՑ քով,

Թիւ 400 Մեծ-փողոց,


Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ

(آ. آماذوریاں) شرکت صتیبه مطبعه سی — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պաշտ-Ալի հասցեի Թիւ 52

Հատոր 40 փարս



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
կիսանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅԺ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարեւ լաւործուածը,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկէրի մեքենան կը գնէ:

Սինկէրի մեքենաները կը ծախոին մի միայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՐՎԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՆԻՂԵՐ

ԲՆԲՍ.

- (1. Մեծ փողոց, Պոն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին .
- (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ

- (1. Սինկէր խան, Թիւնէլի ետեւը.
- (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

- (1. Սուլթան համամ .
- (2. Սուլթան Պէյաղլիա, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 .

ՍԿԻՏԱՐ

Չարչը Պոյու, թիւ 120 .

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնանիւղեր գաւառներու թոյր ֆաբրիկանու մէջ:

Սինկէրի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ
343 կրկին, Տիւզդուլուի տունը:



ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 38

ՇԱՐԱԹ

19 ՄԱՅԻՍ 1907

ԲԵՄԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ

Գ Է Ո Ր Գ Հ Օ Լ Ա Ս

Եկեղեցականին, վաճառականին, սեղանաւորին, ուսուցչապետին քով կ'երթայ հանգչիլ դերասան մ'ալ Գէորգ Հօլաս:

Մեր անցեալ թիւով պատկերը դընելով մահը կը գումթէինք անդրանիկ դերասանուհւոյն Տիկին Արուսեակի, և այսօր դժբաղդութիւնը ունինք երկրորդ և ոչ նուազ արժանիք ունեցող դերասանի մը, Գ. Հօլասի վերջացող կեանքին փուլերը քրքրելու:

Մնակեան թատերախումբին ալ բաղուկը, ինչպէս կոչեցին մեր պաշտօնակիցները օրը օրին, իր ամբողջ կեանքն ու ջանքը դրած էր միշտ վեր, միշտ փայլուն պահելու համար թատրոնը և անոր նուրբ արուեստը:

Հօլաս չատ կանուխէն նետուած թատերական ասպարէզը, քիչ ատենուան մէջ յաջողած էր համակիրներու ստուար խումբ մը կազմել և ժողուել անոնց գնահատումը, իր ցոյց տուած արուեստին և անոր յաջողութեանը մասին, այնպէս որ երեսուն երկար տարիներու մէջ իր անդուլ և անընդհատ աշխատութեամբը հասած էր այն կէտին, որ ժողովուրդը իր առաջին entréeին գէպի բեմը, խլացուցիչ ծափերու մէջ կը խեղդէր իր առաջին բառերը կատարելիք դերերուն:

Grand premierի դերերուն ինչպէս նաեւ ցոփ և անառակ գինեմսի ձեւերուն մէջ համահաւասար կարողութիւն մը ցոյց կուտար Հօլաս, զաւելտին մէջ

foolish, տրամաթիք բիւններուն մէջ կու-
կիկ կերպով կը կատարէր գերերը մի և
նոյն յաջողութեամբ, մի եւ նոյն ճշ-
գասպահութեամբ :

Տաճկերէն մաքուր, յստակ և ճիշդ
արտասանութիւնը, բեմական ծան-
րագլուխ և correcte գերակատարու-
թիւնը ամէնէն գնահատուած և մաս-
նաւոր գովեստներու արժանացուցած
էին իր անունը :

Հօլաս մին էր այն հազուագիւտ դե-
րասաններէն՝ որոնք յուշարարին բեր-
նին մէջ չեն նայիր : Ինքը այնքան
վարժ էր իր ստանձնած գերերուն մէջ
որ երբէք յուշարարին փոփոութիւն չէր
սպասեր թուրակաբար կրկնելու հա-
մար տետրակին խօսքերը, այլ բնա-
կան շարժումներով իրականին կը մո-
տեցնէր պատկերը և երբէք չէր կա-
կազեր :

Իր գլխաւոր գերերուն մէջ յիշենք
« Երկու որբուհիք »-ի մէջ ժագի գերը
որ կը կատարէր, և որուն նմանը պէտք
է ըսել թէ ոչ ոք պիտի կրնայ յաջո-
ղապէս ներկայացնել : Գամբիազարդ-
տիկնոյ մէջ՝ Տիւվալ Բեռի և ուրիշ
կարգ մը նշանաւոր գերեր, որոնց մէջ
միշտ ճերմակ երես ելած է և նոյն իսկ
կրկին և կրկին ծափերու արժանացած :

Մնակեան խումբին մէջ ատեն ա-
տեն յառաջ եկած գիւրիմացութիւն-
ներ, ըսի ըսաններ, հակառակ կար-
ծիքներ և անհամաձայնութիւններ
վերջերս տեղի տուած էին և ասով
խումբը երկուքի բաժնուած էր : Այիք-
սանեան-Հօլաս և Մնակեան խումբերու
անուամբ, որոնք զատ զատ պիտի
գործէին, զատ զատ ներկայացումներ
պիտի տային եթէ . . . անգութ մահը
չի գար չի խլեր Հօլասը Այիքսանեանի
բազուկներէն, որ աղը պիտի ըլլար այդ
անջատուած խումբին :

Ո՛վ կ'ըսէր թէ կը մեռնի Հօլաս :
Առողջ կազմուածք մը, կարմիր այտեր,
ազգու նայուածք, որոշ և կուռ խօ-
սակցութիւն մը որ լայն կուրծքէ մը
դուրս կուգար : Բա՛յց . . . աւաղ որ
այդ բոլոր նպաստաւոր յատկութիւն-
ներով նոյն իսկ, գառնուկի մը պէս
ինքզինքը յանձնեց մահուան ճիրան-
ներուն, առանց դիմադրելու, դոյշն
ոյժ մը զգալու իր մէջը :

Թերեւս իր անակնկալ մահը շատեր
վերագրեն, կամ փորձեն վերագրել,
ալքօլամիւթեան, բան մը որ չունէր,
խեղճը կը խմէր, բայց չափաւորութեան
չըջանին մէջ, առանց abut ընելու : Իր
մահը պէտք է փնտռել բուն իսկ իր
արհեստին մէջ, անոր առթած մտա-
հոգութեանց մէջ, ըսի ըսաններու տա-
րափէն շլմորած, և արհեստակցական
ինչ ինչ բանավէճերու հետեւանքն էր,
որոնց չի կրնալով կուրծք տալ՝ տեղի
տուաւ մահուան, իր ետին ձգելով՝
այրի մը, մանչ և աղջիկ երկու չափա-
հաս զաւակներ, որոնք կողքան այսօր
իրենց հայրիկին կորուստը :

Գեռ հիւանդութիւնը չի ծանրացած
Հօլաս զգալով մահուան ցուրտ թաթին
հոգին վրայ ծանրանալը, զաւակը մո-
տը կանչելով ըսած է անոր, « տղա՛ս,
ես պիտի մեռնիմ, դուն ընտանիքին
հայրիկը պիտի ըլլաս, գերասանութենէ
զատ ամէն ասպարէզ քուկդ թող ըլ-
լայ . . . » :

Նոյն իսկ այս տխուր կտակին մէջ,
ըկում մը, զգուանք մը, ատելութիւն
մը չէ՞ք նշմարեր, հանդէպ այն ասպա-
րէզին, որուն բեմին վրայ երեսուն
տարի քրտինք թափած էր խեղճը :

Երանի թէ Մեծայարգ գերասանա-
պետը՝ Մնակեան էֆէնտի, ինչպէս
նաեւ իր Պատ. ընկերները իրենց ան-
զուգական ընկերով՝ Հօլասի մահուան
սուգը և անոր մխիթարանքը գտնեն,
կրկին ձեռք ձեռքի տալով ՀԱՄԵՐԱՇ-
ԽՈՒԹԵԱՄԲ, ՍԻՐՈՎ և ԱՆԲԱՄԱՆ :

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Բ Օ Թ

Երկուսաբքի Հայ-Հռովմեական ազնուատոմ գերդասաններու եւ ամենազգի Հայ-Լայթ եղանակներու մէջ կայծակի արագութեամբ տարածուեցաւ սա սեւ գոյժը՝

Մ Ա Հ

ՆԵՐՍԷՍ ՊԵՅ ԱԼԼԱՅՎԷՐՏԻԻ

Ո Ր Դ Ի

ՎՍԵՄ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԷՖԷՆՏԻ ԱԼԼԱՅՎԷՐՏԻԻ

մահուան անգութ մանգաղը ժամանակէն շատ կանուխ եկաւ խել, նորաբողոք ու խօսմանից կոկոնը իր բունէն, ի սուգ անմխիթար համակելով ծերունազարդ հայր եւ ամբողջ Ալլահմէրսի գերդասանը :

Ներսէս Պէյ, հազիւ 32 գարուններու պտուղ, զարգացած, կիրք, ազնուաբարոյ եւ ամենէն սիրուած երիտասարդ մ'եր, կոչուած իր տղար հօր միակ շառաւիղը ըլլալու, որ վերջերս իր վրայ սպառնացող սաժանելի եւ անողոք հիւանդութեան մը չի կրնալով կուրծք տալ՝ աւանդեց իր հոգին, իր ետին ձգելով ազնիւ անուն մը, անմխիթար ծնողք մը եւ վշտահար սուտաբար երեկամաց եւ ծանօթաց խումբ մը :

Յուդարկաւորութիւնը՝ որուն հանդիսաւորութեան համար ոչինչ խնայուած էր, կատարուեցաւ Երեւանի առաջին Հայ-Հռովմեականաց Բերայի Ս. Երրորդութեան եկեղեցին : Դագաղը փունջերով, ծաղկեպսակներով զարդարուած՝ պարսեղներու մէջ զետեղուած էր գոգցես : Ժամը 2 ին սկսաւ ձայնաւոր Պատարագը : Դասին մէջ կը զգնուէին Կ. Պատրիարք Տ. Պողոս Ս. Սապապաղեան ինչպէս նաեւ բարձրաստիճան եկեղեցականք եւ Հայ, Յոյն Պատրիարքական պատուիրակներ եւ ուրիշ բազմաթիւ ներկայացուցիչներ : Յաւատ Պատարագին սկսաւ յուդարկաւորութեան կարգը ի ներկայութեան աշխարհական ակամաւոր անձնաւորութեանց եւ բարձրաստիճան ամեն ազգէ յուդարկաւորներու, որոնք եկած էին իրենց վերջին յարգանքը մատուցանել ողբացեալ հանգուցելոյն :

Յաւատ արարողութեանց, դագաղը զոր կը կրէին Ալլահմէրսի Տան պատշոնեաները, առաջնորդեցին քառաձի առաջնակարգ կառքը, որուն կը հետեւէին բազմաթիւ շանտներ յաշկապէս յուդարկաւորներու համար պատրաստուած, եւ այսպէս մեծ շքով եւ անսգիւս կարգապահութեամբ առաջնորդուեցաւ Շիշիի գերեզմանատունը, ուր մարմինը ամփոփուեցաւ Ալլահմէրսի մեծանուն գերդասանին յատուկ դամբարանին մէջ :

Հանրագիտակի խմբագրութիւնը այս փութ առթիւ իր խորին ցաւակցութիւնը կը փութայ յայտնել՝ Վսեմ. Յովնանէն Էֆենտիի, Ազն. Ալլահմէրսի Քոյրերուն եւ համայն գերդասանին :

ԱԼՊՈՍԻ ՄԸ ՄԵՋԵՆ

«Չկայ աշխարհիս վրայ բան մը որ սիրուելու այնքան քիչ արժանի ըլլայ որքան մարդը: Կատու մը աւելի կ'արժէ քան թէ մարդ մը ... ըստ իս»:

ՕՐԻՈՐԴ ...

Այս տողերը հայ օրիորդ մը գրած էր գրասէրի մը ալպոմին մէջ: Յ. Ալփիար, որուն ներկայացուցած էին Ալպոմը, խնդրելով որ ինք ալ բան մը գրէ հոն, զայն թղթատած ատեն կը կարդայ օրիորդին խորհրդածութիւնը և, էջը դարձնելով, կը գրէ:

ԱՌ ՕՐ ...

Եթէ տէրը՝ աստուածային հաճոյակատարութեամբ՝ գոհացում տալ ուզէր ձեր անգլթօրէն մարդատեսաց դիտողութեան և ըբէր տղեղ սեռի մահկանացուներուն, որոնցմէ եմ.

— Տղաքս, կատու եղիք. — Անշուշտ այն ատեն ոչ ոք պիտի քաշուէր և անոնցմէ է՛ն ազնիւը ըլլալու:

Արդ երեւակայեցէք, Օրիորդ, որ ամբողջ էրիկ մարդիկ մէյմէկ կատուններ եղած ըլլան: Ներեցէք ինծի ալ ենթադրել թէ առաւօտ մըն է:

Դուք ձեր մտաքսապատ բազմոցին վրայ ընկողմանած կը հպարտանաք ձեր տարած յաղթանակին վրայ, և ճիշդ այդ միջոցին ձեր սենեակին կիսաբաց դռնէն նորաստեղծ կատուններէն մէկ հատն է ահա՛ որ թաւշէ թաթիկներով, առանց աղմուկի, ներս կը սպրդի և կուգայ, ինչպէս ամէն ԻՐԱՆԻՅՆԷ կատու, ձեր բոլորտիքը քսկռտուիլ և կըռնակը ուռեցնելով ձեր ձեռքերուն վրայ պըտրտցնել այն վարդազոյն ժապաւենի կտորը որ լեզուն է:

Ինչպէս մարդերուն նոյնպէս և կատուններուն մէջ բազդաւորներ չկան, Օրիորդ:

Դուք այն ատեն պիտի շոյէիք, պիտի գրկէիք այդ հոգեփոխեալ կենդանին և կէս կատաղի կէս աղու նայուածքով և աստուածային կարգադրութեան հակառակ պիտի ըսէիք անոր.

— Ա՛խ, փխսիմա, մա՛րդ եղիր:

Հակառակը մի՛ պնդէք, կ'աղաչեմ:

Յ. ԱԼՓԻԱՐ

ՋՈՒԱՐԹ ԽՐԱՏՆԵՐ

[ՖԱՆԹԵԶԻ]

Դեղին մօռուֆ դեղին պէխ,
Մարդիկ, կ'ըլլան յանախ զեղխ:
Որք ունին գրուզ մազեր,
Միքս անճան կ'ընեն նազեր:
Կապոյս աշուլ այր քէ եգ,
Կուսան հոգւոյն մըրրիկ մեգ:
Ու նախանձն ալ հոգեխանձ,
Սոսկ այդպիսեաց է մեծ գանձ:
Երբ կին մը ձեզ կը ժրպսի,
Կեղծիքն է որ կը ծրպսի ...:
Ֆրոու Ֆրոու փեշերն ալ,
Յանախ սիրեն ետերն ալ:
Միքս Բոօքի կամ Հալփի
Կ'երբայ կին մ'ի սես խալփի ...:
Պարսեանաւ ամուսին,
Տերն է միքս իւր նամուսին:
Թէ երկէ իսկ մերք պիրա,
Իւր կեսին հետ ան վիրա:
Ես չ'եմ գրեք սոխակ, վարդ,
Երբ գրութիւնս է գըւարթ:
Ո՛չ ալ կոտրել այս գրիչ,
Միքս կ'անցնի, գիտե՞ք ... հիչ,
Վերջին խրատս սիրս մի սափ,
Երբ չ'եմ սիրոյ ասակ:
Երբոր տեսնեմ կին-աղջիկ,
Երբեք հեռու մի փախչիք:
Ըրեք անոնց հետ կասակ,
Սակայն մ'ըլլաք խեղկասակ:
Կիսախարհեան կիներուն,
Մի յանախեք տուներուն ...:
Մի փրնտեք շատ բարակ,
Որ չըլլաք ախտաւարակ ...:
Կամ ամուսին մի մընափ,
Թէ կը սանիք ձեզ խընամփ:
Այսօր բաղդը ժրպսի միքս,
Դուցէ վաղն ալ այն ձեզ վիքս:
Երբոր ըլլայ իրինկուն,
Կրկուն կ'երբայ իսկոյն բոյն:
Վա՛յ, այն մարդուն որ խըման
Եղած, կուսայ ... իւր լուման,
Կես գիշերին դառնայ տուն
Մըրթալով ... «գիշերուն» ...:
Մինչդեռ կինը խըռոված
Բողոք կուսայ առ Աստուած:

Բէնկը

ԱՐՇԱԿ Դ. ԻՍՊԷԶԻՐԵԱՆ

ԲԵՐԱՑԻ ՕՐԻՑՐԴԻ ՄԸ ՕՐԱԳԻՐԸ

“Դոց նամակ մը որ կրնայ բաց կարդացուիլ

Հոգիս,

Այսօր ճիշդ չորս օր է սենեակս փակուած՝ անկողնոյ չեմ ծառայեր, սակայն պարտաւոր եմ տկար մարմնոյս ծառայելու:

Ոյժ չունիմ Սրբուհիս, նոյն իսկ գրիչ մը չարժեղու չափ, բայց չեմ գիտեր հիմա որ քեզի կը գրեմ, ինչպէս կըլլայ որ կը յաջողիմ . . . : Վերջին նամակիդ մէջ թուած հարցումներուդ կ'աղաչեա որ հրապարակաւ և նոյն իսկ Հանրագիտակի միջոցաւ պատասխանեմ:

Կը գովեմ զգացումներդ, նամանաւանդ կը շնորհաւորեմ զքեզ, որ այդ գաղափարովդ կը զատուիս նմաններէդ, և կը խորշիս հասուկ աղջկան լկտի tête-à-tête-ներէն. հրապարակաւ կ'ուզեա որ լուսաբանեմ՝ կարողութեանս չափ հարցումներդ, թերեւս օգտակարութիւն մը մատուցած ըլլալու համար Մարդկութեան զաւակներուն՝ օրուան աղջիկներուն:

Լաւ:

Առաջին հարցումդ, որ փիլիսոփայական և ընկերական շատ բարձր նիւթի մը շուրջ կը դառնայ, պատասխանել անոր, կոչիկէս շատ վեր պիտի հանէր զիս, սակայն պիտի ջանամ անձնական փորձառութիւններս ամփոփել և կարելին ընել փոքր ինչ գոհացում տալու համար քեզի:

Ամուսնանամ թէ ոչ . . . , կը հարցնես ինծի:

To be or not to be !

Չեմ գիտեր թէ Հօմ աքուլէն ելած օրէդ ի վեր առանձինն կը զբաղիս անգլիէրէնով, որպէս զի հասկնաս այս բացատրութիւնը, որ տասնէ աւելի իմաստ և նշանակութիւն ունի իր պարզութեանը մէջ:

Ամուսնանալ . . . ընտանիք կազմել, վայելել բնութիւնը, ըմբռնել մաքուր կեանք մը, չըջապատուիլ բարեպտուղ զաւակներով, գուրգուրալ անոնց վրայ, սիրել ու սիրուիլ,

որ մէկը հոգիս, ամուսնութեան երկներանգ անուշութիւններ ու որ մէկ առաւելութիւնը, որ մէկ անուշութիւնը թուեմ քեզի որպէս զի ըմբռնես մեծ խորհուրդին վեհ ու գեղեցիկ գաղափարները:

Չամուսնանալ . . . ապրիլ ինչպէս կ'ապրին թուականները, երգ ի բերան ուրախ զուարթ, չունենալ մէկը քարոհանքուդ դէմ արգելք, չզգալ ցաւերը՝ որոնք ամուսնութեան մէջ իրարու կը յաջորդեն, չի տանիլ լուծը ամուսնոյ մը որ քենէ առաջ իր անձը կը սիրէ անվրէպ, չտանիլ անոր ցատուքը, չի հաւատալ անոր փոփոխական սւ չինծու սէրին, չի լսել այն աղի ու դառն խօսքերը՝ որոնք անձրեւի պէս կը տեղան երբ ալքով կ'երթայ որդեկ ներսը, սիրել անձը օտարէ մը աւելի և հնազանդիլ միմիայն ներքին ձայնին ու հպատակիլ անոր . . . :

Ահա, սիրելիս, ամուսնութեան և ամուսնութեան երկու եզրերը, մին միւսէն անուշ, մին միւսէն լեզի:

Այսօր դուն գեղեցիկ ես Սրբուհիս, քու գեղեցկութիւնդ բուն իսկ վարդն է: Զոր մեղուներ ունիս բոլորտիքդ, որոնք բզզալով տղալով ծծել, քամել կուզեն քու մեղրդ, քու բաժակիդ մէջ պահած անուշ հիւթիդ սիրոյն է որ այդ մեղուները խենդի պէս կուզեն թառիլ, կուզեն քաղել քու անուշութիւններդ, բուն իրենց համար, իրենց օգտին, իրենց գործին համար:

Վաղը՝ երբ կորսնցնես թարմութիւնդ, ու ալ քու մէջդ չի կրնա այն նիւթն ու հիւթը, որուն համար կը սիրուէիր, երբ թոշնիս, դալկանաս ու փտտիս . . . ոչ մէկ մեղու կուզայ մօտդ, ոչ մէկ աչք կը սեւեռի վրադ, ու ոչ ոք կը յիշէ դեղդ:

Աղջկան մը երիտասարդութիւնը կ'անցնի հոգիս, անոր կեանքը վարդին պէս է:

Քու վարդ տարիքիդ, որուն մէջ կապրիս, ինքզինքդ մի տրամադրելի ընէր բոլոր

շուրջ դարցողներուն, օգտուէ երիտասարդութենէդ, գործածել գիտցիր, նոյն իսկ շահագործէ թարմութիւնդ, ծանր եղիր, ծանր և ծանրագլուխ:

Առաջին անգամ տեսած և հաւնած երիտասարդիդ «իսկալս ե» մըտէր, հաւնէ, բայց նշանաբանդ excelsiorը թող ըլլայ, գիտցիր, համոզուէ թէ ատկէ աղէկին արժանի ես, այս գաղափարը քեզի մեծ մենտոր մը կըրնայ ըլլալ:

Մի սիրեր թեթեւութիւնը, ոչ ալ թեթեւը, շատ ծանրագլուխէն խորշէ, ապերջանիկ կըլլաս, ընտրէ մէկը որ ապրելէ աւելի ապրեցնել գիտնայ, հագուելէ աւելի հագուեցնել և սիրելէ աւելի սիրուի:

Կը տեսնես Սրբուհիս, ամուսնութեան վրայ չեմ ծանրանար կոր, ամուսնութիւնը պարտականութիւն մ'է և անոր մէջ դերանալը՝ մեղք մը:

Մեղաւոր մի կոչեր զիս, մեղքը կը մըտնաս, իմ ամուսնի վիճակիս գաղտնիքը մի ստիպեր որ հրապարակեմ, գէթ ատիկայ իմ քմահաճոյքս թող ըլլայ:

Օրուան երիտասարդները, որոնք կեանքի ընկերէ մը աւելի ապրուստի ընկեր մը կը փնտռեն ընդհանրապէս, դէմքէդ աւելի ձեռքիդ կը նային և սրտէդ աւելի սնտուկիդ:

Այսօր ան երիտասարդը՝ որ ամուսնանալու համար հոս հոն կը դիմէ, գիտցիր որ գործը խախտու է և կամ դրամագլուխը նուազած, քանի որ օրուանները՝ շատ քիչ բացառութեամբ ամուսնանալու փափաքողներ չեն, չի պակսիր իրենց պատեհութիւն անոր ասոր հետ ժամանակ անցնելու:

Չգուշայիր, դուն անոնց պէս մըլլար, նոյն իսկ վախցիր ձեռք թոթուելէ, պարզ գլխու բարեւ մը շատ բան կրնայ վաստկցնել քեզի բարոյական տեսակետով:

Երանի անոր որ իր զգացումները պարտակել գիտէ:

Մարդիկ կան՝ որոնք արցունք մը չեն թափեր սիրելէոյ մը դադաղին վրայ, բայց երբ անոնց սիրտը բանաս՝ արցունքի լիճ մըն է:

Չսպէ զգացումներդ՝ ինչպէս ըսի, աչքէդ, բերնէդ և ձեռքերէդ աւելի միտքդ թող գործէ:

Ծնողաց հնազանդութիւնը առաքինութիւն մ'է թէեւ, բայց քու խելքդ չի հասած առաջարկութեան մը հանդէպ ձուկի պէս համր մի ըլլար, համոզէ զիրենք, և ջանայ պարկեշտ և կիրթ ձեւերով զգացնել իրենց, գծելով այն կարգ մը անպատեհութիւնները որոնցմով յարմար չես դատեր այդ առաջարկը:

Շատ մի փարիք այն երիտասարդին՝ որ զքեզ կնութեան առնելու համար որոշ դրամ մը կը պահանջէ, ամէն բան կը ծախուի, կը գնուի, բայց սէրը զին չունի, սակ չունի սիրելիս: Դրամիդ սիրոյն թէեւ ժամանակ մը պէտք եղածէն աւելի սէր պիտի վայելես, սակայն պիտի գայ օր մը երբ տուած մէն մի ոսկիդ մէկ մէկ ապտակով պիտի փոխարինուի և կամ լեղի խօսքերով:

Միջակ ամուսին մը ընտրէ, խոհանոցը յանձն առ, աւելը, տան հոգածութիւնը սիրով ընդունէ, քան թէ ժամանակաւոր հանգիստը, սպասաւորներէն շրջապատուած:

Ձի մոռնամ յիշել նաև քուալիքի է՛ն կարեւոր կարգ մը նկատումները, որոնք մեծ դեր կը խաղան բարոյականիդ վրայ:

Երբէք չեմ ներեր, որպէս զի օրը օրին նորաձեւութեան հետեւիս, այս բարեկամական արգելքը մէջ կը բերեմ երկու տեսակետով: Նախ փուճ տեղը ծախքերու կը մատնուիս, երկրորդ լաւ գաղափար մը չես ի տար զքեզ ճանչցողներու և համակրողներու վրայ:

Տե՛ս, հիմա ամառ է, տիրող տաքը այնչափ կատիպէ որ, նոյն իսկ փողոցներու մէջ կրեն այն տաքազը՝ որ տանը մէջ իսկ անպատշաճ կը թուի:

Կաթնաթոյր ծոծրակը, լեցուն թեւերը չեն որոնք ազուրուութիւնը պիտի հաստատեն. աղջկան մը գեղեցկութիւնը, լըջութիւնը, կոկիկութիւնը, պարկեշտութիւնը միշտ վար նայող աչքերուն մէջն է ու պէտք է ըլլայ հոգիս:

Թիւղերու մէջ բաց թեւերը, պոօտներով շրջանակուած կուրծքերը մեղ և մեղիպէսներուն համար չեն:

Աղջիկ մը իր sketchnովը պէտք չէ հաւնուի, այլ բրդեղէն գոց քօթիւմին տակ սեղմուած բարոյականովը:

Անաւատիկ անուշա, քեզի կարգ մը խրատականներ, որոնք թերեւս քիչ մը ձանձրացուցիչ թուին նախ, բայց երբ օր մը, տարիներէ վերջ ձեռքդ անցնի այս տողերը, այն ատեն թերեւս դուն ալ քու մէկ բարեկամուհիիդ օգտակար ըլլալու համար նոյնութեամբ ընդօրինակես, եթէ ինծի պէս ձեռքդ հասած է՛ն աննշան գրուածքն անգամ պահելու գեղեցիկ սկզբունքը ունիս:

Սեղանիս վրայ գրուած ժամացոյցին նայեցայ, կէս ժամ անցիր է դեղիս ատենը, իմ այս գոհողութիւնս պիտի կրնայ արդեօք փրկել զքեզ քու երիտասարդ եռուզեռ վիճակէդ . . . :

Ձեմ գիտեր, բայց կը սիրիմ յուսալ:
Բերա, 14 Մայիս 1907

Ձերմ համբոյրներով

ՁԱՁԱ

ՄԻԱԶԵՆ ԱՂԶԻԿԸ

Դպրոցէն տուն վերադարձեր և աթոռ մը առնելով պարտէզին դրան առջեւը նստած՝ փողոցին անցուդարձը կը դիտէր Վերթին, այդ իրիկունը, երբ հեռուէն արձակուած քար մը իր աչքին հանդիպելով, պայթեցուցած էր զայն:

Հոն՝ մօտերը խաղացող դպրոցականն աւղաքներու մէջէն էր արձակուած քարը, սակայն յայտնի չէր եղած թէ ո՞վ էր զայն նետողը, որովհետեւ այն սոսկալի ճիչը, զոր ցաւը խլած էր Վերթինի կուրծքէն, թռչուններու հոյլի մը պէս, մէկէն ցրուած էր տըղաքը բոլոր:

Շատ տառապած էր հէգ աղջիկը: Ծնողքին կողմէ իրեն չափաւրած ամէն բժշկական խնամք ապարդիւն մնացած էին: Շատ աշխատած, ամէն ճիգ թափած էին, որպէս զի իրենց աղջիկը միայն չմնայ. բայց անօգուտ:

* * *

Տարիները իրարու կը յաջորդէին . . . :

Հիմա, մեծցած էր Վերթին, արբունքի հասած, սակայն ոչ մէկը կ'երթար անոր ձեռքը խնդրելու:

Ասոր պատճառը գտնելու համար խիստ խորհրդածութիւններու, միտք յոգնեցնելու պէտք չկար. ինքն իսկ արդէն, գիտէր թէ ի՞նչ է պատճառը այն տեսակ մը ընդհանուր անտարբերութեան որ տիրուած էր իր շուրջը:

Արդարեւ, եթէ երիտասարդի մը պատահէր այդ դժբաղդութիւնը, խնդիրը նուազ ծանր եղած պիտի ըլլար: Սակայն օրիորդի մը համար, մանաւանդ, Վերթինի պէս օրիորդի մը համար, անքաւելի մեղք մը, աններելի ոճիր մը կրնար սեպուիլ: Ո՞վ աչք պիտի դոցէր այդ թերութեան առջեւ, հոգ չէ թէ Վերթին առատ սեւ մազեր, սիրուն և սպիտակ դէմք մը, կանոնաւոր դիմագիծեր, նուրբ յոնքեր ունենար, առաքինի, բարեկիրթ և համեստ ըլլար:

Մինչդեռ իր հասակակիցները, դպրոցի և թաղի ընկերուհիներէն շատերը, արդէն պլոտ-դատու տունկերու վերածուելով՝ նոնոյիկ պտուղներ! կ'ընծայէին հանրութեան, ոմանք տարին անգամ մը և ոմանք երկու տարին, ինք՝ տակաւին իր բունին վրայ կը առտանէր անմահ ծաղիկի մը պէս:

Օր մը, նստած իր մօրը հետ կը տեսնուէր, այլ և այլ նիւթերու վրայ, երբ դուռը զարնուեցաւ:

Նախկին դրացուհի մը՝ տիկին Էլպիսն էր, որ երկար ատենէ ի վեր հեռաւոր թաղ մը հաստատուած էր իր միակ աղուն հետ և որ այդ օրը եկած էր տեսնուելու ասոնց հետ, իրենց վերաբերեալ խորի մը համար:

Քանի մը օր վերջ, թաղին մէջ ամէն մարդ լսած էր, արդէն, թէ Վերթին պիտի ամուսնանայ տիկին Էլպիսի աղուն հետ:

Այս բերկրալի լուրը ո՛րքան հրճուանք պատճառեց և սիրուն անակնկալ մը եղաւ Վերթինի ծնողքին, նոյնքան մըն ալ պատճառ՝ որ աղջկան նկատմամբ շատերուն անարգանքը, արգահատանքը նախանձի փոխուի:

Ահա եղելութիւնը:

Այս բարի դրացուհին՝ տիկին Էլպիս, ասոնց երկար բարակ պայմաններ առաջարկելու, մէկ բառով Վերթինի ձեռքը խնդրած էր իր որդիին համար, որ չմոռնանք ըսելու թէ՛ շատ նախանձելի և պատկառազուգիւրդ մը գրաւած՝ պատուաւոր փաստարան

մըն էր և հետեւաբար կրնար իր հայեացքը շատ վերերը սաւառնել :

Ամէն մարդ խելք չէր կրնար հասկնել այս գաղտնիքին, շատ իրարանցում և հետաքրքրութիւն պատճառեց այս լուրը այն շրջանակներուն մէջ՝ ուր կը բնակէր Երուանդ : Այնպէս որ օր մը իր մտերիմներէն մէկը առանց քաշուելու համարձակեցաւ հարցնել .

— Աստուածդ սիրես, այդ աղջկան ինչին հաւնեցար տէ կ'առնես կոր :

— Կը ներես պարոնս, այդ պարագանքնէ չեն հարցներ, աչքին հաւնեցայ, չէ՞ մի որ ճաշակները վիճելի չեն, միայն ըլլալուն համար է որ կինս պիտի ըլլայ, պատասխանեց տղան :

* * *

Հարմնիքին յաջորդ օրը նորապսակ ամուլը մեղրալուսինի ուղեւորութեան մը ձեռնարկեց անմիջապէս, շարք մը փայլուն հանդէսներէ, խրախճանութիւններէ վերջ, որոնք տեղի ունեցած էին իրենց ամուսնացած օրը :

Վերժին որ Երուանդի պէս մէկու մը հետ ամուսնացած ըլլալով՝ կրնար երջանիկ համարուիլ, փունջերու և կողովներու պուրակի մը մէջ կիսովին անհետացած, շողեւումն մէջէն իր ամէնէն անուշ ժպիտները կը բաշխէր այն բարեկամներուն և ընկերներուն՝ որոնք ողջերթ մաղթելու եկած էին իրենց :

Քառորդ ժամ մը եւս և ահա շողեւումը սուլեց, երթալու համար դէպ ի Մարտիկիս :

* * *

Տարիներ անցած էին իրենց ամուսնութենէն ի վեր : Զմրան գիշեր մը Երուանդ և Վերժին իրենց շուրջը բոլորած իրենց պղծտիկները և տիկին էլպիսը նստած էին տաքուկ սենեակին մէկ անկիւնը : Երուանդ լրագիր կը կարդար, Վերժին ձեռագործ մը աւարտելու վրայ էր, պղտիկները կը խաղային իրարու զնտակ նետելով, իսկ մեծ մայրիկը՝ տիկին էլպիս, ամէնքը կը պարուրէր իր անհուն խանդավառութեան ակնարկին մէջ :

Յանկարծ Վերժին ձիւ մը արձակեց և ձեռքը առողջ աչքին տարաւ :

Պղտիկներէն մէկուն զնտակը անոր աչքին հանդիպած էր :

Մեծ իրարանցում մըն է սկսաւ տան մէջ : Երուանդ բժիշկ բերել կ'ուզէր, տիկին մայրը շուարեցաւ, իսկ պղտիկները կարասիի մը ետեւ պահուրտեցան վախերնուն :

Բարեբաղդաբար, անհետեւանք անցաւ պղտիկներուն այս անխոհեմութիւնը և բնաւ չ'ընտանեցաւ աչքը :

Սակայն տիկին էլպիս սաստիկ բարկացած՝ չէր կրնար ինքզինքը զսպել, կը փրփրար և անպատճառ պղտիկները պատժել կ'ուզէ :

— Անառակներ, պոռաց, հայրերնիդ մէկ աչքը հանեց, դուք ալ միւսը հանել կ'ուզէք . . . :

Վերժին այն ատեն միայն հասկցաւ թէ, ամուսինն էր եղած մանկութեանը ատեն իր աչքին քար նետող և անոր կուրութեան պատճառ եղողը : Յանցանք մը՝ զոր ինչպէս տեսանք, լիուրի դարմանած էր և որ թերեւս մինչեւ վերջը գաղտնի մնար, եթէ տիկին էլպիս բերնէն չ'փախցունէր այդ օրը :

ԲԵՐԱ

ՍԵՊՏԻՄ. ԱՎՈՒՆԻ

ԽՕՍՔ ԿԱՊԸ

ՔՐՈՆԻԿ ԼԱՆԿԱՅԷ



ՃՐՈՂՈՂ :

Ո՞վ է արդեօք ըսելով տիկինը վար կիջնէ, դռան առջեւ տարիքոտ կին մը բարեւ տալէ վերջ :

— Հինգ տասը վայրկեան կրնամ կէօրիւշ ըլլալ քեզի հետ քա կէնճս :

— Ինչո՞ւ չէ, ամենայն սիրով, տիկինը հիւրը հիւրանոց կառաջնորդէ :

— Երկու օր առաջ, իմանալուս կէօրէ, դուք սուվարէ տուեր էք, ամմա իմ կալուս սէպէպը աստ չէ, ան իրիկունը իմ թէյզէիս տղան ալ հոս է եզեր, մալիւմ ա, մինք ալ տէլի խանը եղանք, շատ պաներ ըրինք, նէ իսէ, անտեղները պէտք է, աստ տղան ան կիշէրը աղջկան մը հետ չօրպան եփեր է, թարիֆին կէօրէ ալ, լայըլը, պոյու պոյու, էթինէ տուկուն, փիլիճի պէս, քէօմլը աչքերով, քէման եայի խաշլար, խումրի պերանով, էլհասը զայէթ ճիւլէլի աղջիկ մըն :

է եղեր, Հիմա, հէր ինչ խրտար քի քեզի զահմէթ է նէ քուրուկս, ասիկա հէմ խէր վէ հէմտէ խայրըլը խըսմէթ մըն է, ձեռքէ մի փոխցունէք տէ, օր առաջ սըվօնք կլօխ կլխի տանք, ամմա մէյմը կանչէ տէ տեսնամ սա աղջիկը:

Տանտիկինը կառսօնի արագութեամբ կը հեռանայ սենեակէն, վարկենապէս դռնէն դուրս ելնելով կերթայ դըրացի աղջկան տունը ու անմիջապէս լուրը կը հաղորդէ: Աղջկան մայրը, քոյրը կսկսին իրենք իրենց հարսանիք կատարել, թոռան ու քեռորդէոյ տիրանալ, կնքել, մեծցունել, վարժարան տալ բժիշկ ընել եւայլն:

Ասդին ապագայ տիկին Տիւպարաճեան իւր արդուզարդովը կզբաղի, վերջանալէ ետք, տիկինը Եւային միամիտ քոյրը առջեւը ձգած տուն կը բերէ, ներկայացունելէ վերջ, օրիորդին շատ մը բարեմասնութիւնները, ազնիւ ձիրքերը կսկսի թուել:

— Եւայրուս մէթ ընելու ինչ հաճէթ, աղջկան երեսէն պէլլի է, ինչ լայնելը ֆամիլեաի մէնսուպ ըլլալը:

— Տանտիկինը խօսքը միջամտելով, եթէ կարելի է այդ միւսիւրին ասորէսը կամ քառթը շնորհեցէք մեզի:

— Քա եւովուս, առտէսի մառտէսի ինչ հաճէթ, Պէյ-օղլու սօղբու եօլին վրայ որու հարցունէք քի Տիւպարաճեանին անլման մազազան ո՞րն է տէի, տասը մատով կը ցուցունեն: Ատ տղան զաթը էլ ալէմին պերանն է, զործը անխըտար աղէկ է քի, Լօւտրուա, Փարիզ և Ամէլիքանի հետ ալըշվէրիշ կ'ընէ կոր, ամման օրդտի, վախիթ մ'անցունէք տէ, հարցունէք պիտի, ինչ պիտի ընեքնէ ըրէք, օր առաջ նշանտուքը ընենք, հարսնիքի հաղբըլը տեսնանք: Շիմտիլիք մնաք բարով քուրիկս, աղջիկս Աստուած ալ քեզ թամամին հասցունէ:

Աղջիկը կը չիկնի, տանտիկինը պէտք եղած յարգանքները ընելէ ետք, հիւրը մինչեւ դուռ կառաջնորդէ:

— Մնաք բարով:

— Երթաք բարով:

* * *

Սուառէին սալօնէն ներս ու անկիւնը բիւնօ մը, երեք երկաթն թիկնաթոռներ, բազ-

մաթիւ աթոռներ, տախտակամածէն կախուած մօմաշար կանթեղ մը որ հրաւիրեալներէն աւելի ... ունիներուն ծիծաղկոտ դէմքերուն տարբեր փայլ մը կըլտայ, հրապուրելով, խօսքը մէջերնիս ... մեղաւորներս:

Տանտէրը կը հրամայէ «en avant musique» ղոյգը «ոգագօ» սրտերը կսկսին տրոփել:

Պարելու վայրկեանը եկած է, ոտքեր «entrelacé» կ'ըլլան, «jambes»ները իրարու կը շփուին «et plus haut» ...:

«Membres inférieures»ները իրենց պաշտօնը ինչպէս որ կատարեալ ճշգրտեամբ կը կատարեն, նոյնպէս «Membres supérieures» ներէն ձեռքերը փոխանակ փափօրէն, գեղեցիկ ու փափուկ սեւին մէջքը ապարանջանելու, ընդհակառակը «muscle» ներուն բովանդակ պրկուժով կը սեղմեն ու երբեմն ալ «sans façon, promenade»ներ ընելու ալ յանդգնութիւն կունենան:

Ասդին ծիք սուռաթ, քաղաքավարութեան փոքր ինչ տեղեկութիւն ունեցող կամ չունեցող միւսիւ մը, զավալը, յոգնած ու քրտինքէն կոնակը այագմա կտրած օրիորդի մը այնչափ կստիպէ զինքը «engagé» ընելու որ վերջապէս օրիորդին մերժումներուն չը կրնալով հանդուրժել, խեղճին վրայէն վերարկուն և ձեռքին մատները բռնելով բրցընելու աստիճան կը քաշէ:

Առաւօտը դժբաղդաբար Մորբէոսի կը յաջորդէ, երբեմն մոխիր ու երբեմն վարդ յիշատակներով լի սրտեր կը վերադառնան բնակարանին:

* * *

Զավալը, տիկին Տիւպարաճեան ըլլալիք օրիորդը, ան գիշեր, մինչեւ առաւօտ չը կրնար քնանալ, մտածելով թէ սուառէի գիշերուն երիտասարդներէն ո՞րը կրնար ըլլալ արդեօք այս անգամ զինքը կնութեան ուզողը, քանի որ այն գիշեր մինչեւ առաւօտ մէկիկ մէկիկ քավալիէներուն ձեռքերէն, մեծ պահքի թօփիկի պօղչալին պէս անցած էր և ամենուն ալ խաղըրը չէր ուղած կոտրել քանի որ ...:

Առաւօտուն, տիկինը, օրիորդին տունը կը վազէ ու երկուքը միասին «toute à la

mode» կառքով ուղղակի կամուրջ, անկից թիւնէլով Բերա կելլեն:

Այժմ կը մնար խանութներուն դապելաները ծայրէ ծայր կարդալ, Տիւպարաճեանին մաղազան գտնել, կը հասնին Պօն-մառչէին առջեւ, աչքերնին վեր նայելէն յոգնած, սէրսէմ թավութներու պէս հաւկուրի կը բռնուին ու քիչ մը հանգիստ առնելու համար կաթնավաճառի մը խանութ կը մտնեն:

— Օրիորդ, շատ դժուար պիտի ըլլայ այսպէս ճամբայ շարունակելը, չեմ յուսար որ ալ գտնենք այդ վաճառատունը:

— Տիկին, չիմացաք իրիկուան հիւրին բաժնեքը, Տիւպարաճեան հռչակաւոր վաճառական մը ըլլալով, ինչպէ՞ս անկարելի կըլլայ զինքը գտնել, խնդրեմ քիչ մը անկարելիք որպէս զի ժամ առաջ կարենանք գտնել:

Այս խօսքերուն միջոցին օրիորդին դէմքը պաղընդին թաց սիւնկէրին գոյնին պէս կառնէր կուտար, կաթնավաճառին հաղիւ թէ դուրս ելած էին, օրիորդը համարձակութիւն կուենայ, խանութպանի մը հարցունել, ձեռքը բռնած ատրէսը:

Երիտասարդ խանութպանը, փորձառու այս տեսակ խնդիրներու մէջ, կը գուշակէ խնդրոյն եղելութիւնը և՛:

— Մատմազէլ պուրտաքի մաղազալար հէփսիտէ նուվօթէ տիր, հէմաէ պուրալարտա Տիւպարաճեան իսմինտէ քիմսէ եօդ, օ՛նու չարչրտա առաւ-փախաւ սօգաղընտա սօրունըզ, պէլքի պուրուրսընըզ:

Խանութպանին այս պատասխանին վրայ, երկու հաւեր գլխիկոր կը վերադառնան առն, կռահելով շուրջերնին լարուած ծուղակը:

Այժմ տանտիկինը կը ցաւի իւր ըրած ծախքերուն վրայ, տանտէրը հապա — նէ իչո՞ն էվիմտէ խայրը չըգմասընտա պայրը չըգսըն, աղբար պէն սուառէի նէ իչուն վէրտիմ ... բսելով ոտքերը գետինը կը զարնէ, մինչ անդին զավալը օրիորդը սեւ շալը գլուխը, ամէն օր ժամ կերթայ, կուլայ ու կուլայ, կանխէ իւր սեւ բաղդը, մանաւանդ այն սուառէն որ իւր գլուխը այրելուն պատճառ եղած էր:

* * *

Բարոյական. — Ինչ բարոյական որ կըրցաք հանելու այս Տիւպարաճեան յօդուածէն, որ ձեզ մարս ըրաւ, եթէ չեմ սխալիր նոյն իսկ շեֆին գուռը:

Մ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

ԿԻՐԱԿԻԻ ՑԵՐԵԿՈՅԹԸ

Ի Ն Պ Ա Ս Տ

ԳՈՒԶԿՈՒՆՃՈՒԳԻ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ

Անդու ջանք:

Շքեղ ցերեկոյթ:

200 ոսկի զուտ հասոյթ:

Ահա երեք յաջողութիւններ, որոնք իրուի նպաստեցին բարեխիրական այն ձեռնարկը, զոր ի գլուխ հանող Մամախուրմբը ինչպէս նաեւ Պատ. Թաղ. Խորհուրդը, շնորհաւորելի է արդարեւ:

Կիրակի՝ հակառակ Մայիսի դեղազուարճ օդին, Սիւրտարէն, Բերայէն և ուրիշ շատ մը արուարձաններէ ընտրեալ բազմութիւն մը եկած զարդարած էր Բլքի-Շանի թատրոնը, որուն ներքին կարգադրանքիւն, հիւրընկալութեան և ճաշակաւոր զարդարման համար ոչ ինչ խնայած էր Մամախուրմբը:

Մնակեան ռեֆեքսիան ինչ քրքջալիր զաւեշտներէն երեք ընտրեալ բիշտներ ներկայացուեցան, մին միւսէն հետաքրքրական և զբօսալի, որոնց հետ մեծանուն երգչան Յ. Սինանեանի քսանէ աւելի արուեստագէտներէ կազմեալ նուագաժողաց խումբը խաղընդմէջ, կատարեալ ֆեստիւլ մը տեղը կը բռնէր, նամանաւանդ նոյն ինքն Սինանեանի հեղինակութիւններուն շնորհիւ, որոնք թէ նոր էին և թէ հեշտալուր:

Մէկ խօսքով ամէն անոնք որոնք եկեղեցիին նպաստ մը հասցուցին, իրենք ալ նպաստաւորութեան պէտք է ըսել, վայելելով թատերական և երաժշտական դիպեցիկ ցերեկոյթէն, և գոհունակ մեկնեցան թատրոնէն:

Ուրախ ենք որ կրթական ու եկեղեցական նոյնօրինակ նպաստներու մեր ժողովուրդը սիրայօժար կը մասնակցի. նամանաւանդ կազմակերպիչներն ալ իրենց ճաշակը երբ կը բերեն միացնել անխոնջ ջանքերուն՝ արդիւնքն ալ նպաստաւոր կըլլայ: Լ...



ՄԱՏԱՄ ՃԸՌ ...Ռ ...Ռ...

[ՈՏՔԵՐՆԻՒ ԶՊԱԳՆԵՄ ԿԱՐԴԱՅԷՔ]

Մատամ չտեսր:

Շատ անգամ հանդիպած քլլալու էք իրեն, բայց ձեր ուշադրութիւնը գրաւած քլլալու չէ ան, որպէս զի գիտնաք թէ ինչ տեսակ էակ մըն է Մատամը:

Ի ծնէ միջակ, հասակն ալ կարողութեանը հետ քօսթիւմ քօմքլէ, պարզ հսնաձի մը աղջիկը, որուն Նախախնամութիւնը ամէն ինչ զլացեր է ... բացի աղուոր խուրովիլու աչուկներէն, որոնց շնորհիւ այսօր ... կեցէք դեռ հոն չեկայ:

Մօրը լուացք ըրած օրերը հօրէն ջուր քաշելէն մանդար կտրած ձեռքերով, սօխ ըստիկէն մատները թէլ թէլ մաշած կտաւ դարձած, օճախին մուխին, և հօրը եռմորուխին տակ ընկճած ու տխուղ, նիհար՝ չարչաֆով դարցնելիք հիւանդի մը պէս, և ոսկրուտ թոմաս Օլտընի ֆանթօշներու քար հանելու չափ: Բէմպէ պատմա ֆիստան մը սիք պօյին, կիրակի օրերը ժամը առաւօտտան չորսէն երեկոյտան տասերկուքը միայն հագնիլը արտօնուած: Հօրի ջրով գլուխ լուալէն շալը սիւնիւրիկէսի մազեր, ու դէմք մը՝ որուն վրայ կարծես սիւրբի պնէկները քանալա բանած են: Կոշտ սկաւրքներու և կամ ցալընի թամայէն կոշտիւր կապած ոտքեր մը ի հարկին կեօշ մալուենասիի դեր կատարելու չափ լայն, քսան փարայի արինայով հալիւ մաքրուելիք ականջներ: Կոսմօֆօնի խոշորակէն պրոթկացող ձառթ խօսուածք մը ունալովացի սպասուհիի մը նախանձը շարժելու չափ կոկիկ (°) քալուածքով:

Համմէ: Հաւանցածք այս պատկերին զոր գծելու համար չապիկ փոխելու աստիճան ջուրերու մէջ մնացի, ասիկայ Մատամ չտեսին աղջիկութիւնն էր, բայց հիմա ...:

Սէրը կոյր է կ'ըսեն, բերանը պագնեմ ըսողին (եթէ խուռպաղըճըն չունի):

Երկնից արքայութիւնը մանուկներուն է ըծուած է Ս. Գրքին մէջ, ես ալ Յ. Գ.ով մը

կ'աւելցնեմ, երկրիս հանգիստն ալ աղուորներունն է:

Ոմն ոք հարուստ, և կատարեալ հրեշտգեղ արտաքուստ, ինչպէս կ'ըլլայ այս օրիորդը կը տեսնայ այն վիճակին մէջ՝ որ թերեւս ձեր սիրտը խառնուցնէ, բայց այդ մարդունը չինքն է:

Ճիշդ պատուհանին առջիւ ոտքերը չորցուցած աստե՛ն աչքին զարնելով բիրէի խածուկներէն գոյն առած սրունգները, հաւնած և տաներեց քահանային միջնորդութեամբ կնութեան խնդրած է այս օրիորդը:

Բայց, տեսէք թէ այս աղքատիկ աղջիկը հարուստին տան մէջ ինչ կ'ըլլայ վերջէն:

* * *

Բաղմամարդ արուարձանի մը չքեղ տունիւրէն մէկուն պատուհանին առջիւ, համակ տանթէլ ոսպ տը չամպու մը կ'ընակը, ձեռքը ծնօտին աիկին մը դուրսի անցուղարձը կը դիտէ:

(Ներեցէք վէպ մը չէ սկսածս):

Հեռուն քանաքէին վրայ նստած է ամուսինը, աչքը կնոջը աչքին մէջ, վարժ քօթօտի մը պէս, պատրաստ կատարելու տիրուհւոյն հրամանները:

— Բեզի հաղար անգամ ըսի քի առապան դրանը առջիւ բերել տաս, հոն պէքլէյէ ... կ'ըսէ տիկինը խօսք առնելով:

— Մատամ, թուամվայով կ'երթամ կոր, ինչո՞ւ կտուք բերել տամ ...

— Ո՛ւֆ ... ես կ'ուզեմ քի դրանս առջիւ բաց ֆայթօնը շուախ տէյի քա կէնստէ անցնողը սանկ մէյմը դառնայ նայի ...

— Խաթերդ համար ասոր բերել տամ ամա հիշ տեղը չիգայ, կ'ըսէ ամուսինը տեղէն ելլալով և դէպի դուռը յառաջանալով, որպէս զի սպասաւորը կ'անչէ:

— Կեցիր կեցիր, ձգէ քի հավէսս առնեմ, ճընկուտախին կոճակը պիտի չալեմ, ը-

սեւիով կը ցատկէ տեղէն և սօնէթին կը մօ-
տենայ ... ճըռ՛...ռ՛...ռ՛...ռ՛...

Բիշ վերջը կառսօնը ներս մտնելուն,

— Կիրակո՛ս ...

— Համմէ՞, մատամ ...

— Գնայ սրտեղէն բաց ֆայթօն մը բեր,
դուն ալ վրան նստէ, առապաճիին ալ ըսէ
քի խըզը մը գայ դրանը առջեւ կենայ ...

— Շատ լաւ մատամ, կ'ըսէ ու կը մեկնի:
Ու հազիւ դուրս ելած թէ չէ,

— Ճըռ՛...ռ՛...ռ՛...ռ՛...

— Համմէ՞ ...

— Առապային մէջը պէօճէք սրտի ըլ-
լայ Կիրակոս ...

— Շատ լաւ մատամ ...

— Ճըռ՛...ռ՛...ռ՛...ռ՛...

— Հայվանները կէօսթէրիչի ըլլայ ...

— Շատ լաւ մատամ ...

— Ճըռ՛...ռ՛...ռ՛...ռ՛...

— Համմէ՞ ...

— Առապաճին ետխըշխը ըլլայ նայէ քի...

— Շատ լաւ մատամ ...

— Ինծի նայէ մատամ, կ'ըսէ ամուսինը,
ամէն բան աղէկ ամա, առապաճին խազը
ետխըշխը ինչ պիտի ըլլայ ...

— Դուն սուս, ես անանկ կ'ուզեմ կոր...

— Բէք աղէկ մատամ, ըսելով խեղճ
մարդը վար կ'իջնայ և կառքին կսպասէ:

— Ճըռ՛...ռ՛...ռ՛...ռ՛...

— Օռիսթէ՞, ըսելով այս անգամ սպա-
սուհին է որ ներս կը մտնայ:

— Էլէնի՞ ...

— Օռիսթէ՞ ...

— Շու պէյազ քէթէն ըռօստէլանը գօյ
տալ գաբուտալ տուր ...

— Բօլի գալա մատամ ...

— Ճըռ՛...ռ՛...ռ՛...ռ՛...

— Հրամմէ՞ ... խոհարարն է որ ներս կը
մտնայ:

— Վարպե՛տ, քեզի չե՛մ ըսեր քի գլոխդ
ձերմակ շաբխան դընես տէ առտունները սա-
հաթ մը դուռը կենաս տէյի ...

— Ես ատանկ բաներ չեմ կրնար դնէր
մատամ ...

— Ծօ՛, ինատծիութիւն չուզեր, ատէթը
ան է, պիտի դնես ...

— Էյ ձիէռքս գործ ունիէմ մատամա, միս
պիտի ջարդիէմ ...

— Միսը ետքը ջարդէ, գնայ դուռը կ'ե-
ցիր կըսեմ կոր ...

— Բէք աղէկ մատամա ... ըսելով մար-
դուկը դուրս կ'ելլայ և ի գործ կը դընէ մա-
տամ չտեսին փափաքը:

Ամուսինը արդէն մեկնած ըլլալով, մա-
տամ չտես, իր քարոհները կը շարունակէ
մինչեւ կէս օր՝ ընդունելութեան ատենը,
որովհետեւ այդ օրը իր ընդունելութեան
օրն էր:

* * *

— Ճըռ՛...ռ՛...ռ՛...ռ՛...

— Մատամ ...

— Ինծի նայէ Կիրակոս, միսաֆիրի իք-
ռամ բերելու ըլլաս նէ սահաթիդ քէօստէլը
աէպէչիրով բառլաթմիշ ըրէ ...

— Շատ լաւ մատամ ...

— Ճըռ՛...ռ՛...ռ՛...ռ՛...

— Համմէ՞, մատամ ...

— Տասը թաղիքէն մէյմը ներս մտիր,
սանկ ձեռքերդ կուրծքիդ վրայ, աչքիս մէջը
նայէ տէ, մատամ, հրաման մը ունիք տէյի
հարցուր միսաֆիրներուն քովը:

— Շատ լաւ մատամ ...

— Ճըռ՛...ռ՛...ռ՛...ռ՛...

— Համմէ՞ ...

— Վախիթ վախիթ ալ եկուր ըսէ քի,
ֆիստանձին եկեր է, հրաման մը ունիք տէյի,
եախօտ խուլումձին էլմանները բերեր է ըսէ,
հասըլը մէկը ուլտուրմիշ ըրէ, ներս մտիր...

— Շատ աղէկ մատամ ...:

Այսպէս պէտք եղած հրահանգները տա-
լէն վերջ, մատամ չտես, սալօնը կը բազմի,
իր էն ծանր թուալէթը տուած, ու ալ հիւ-
րերը կզկսին դալ:

Հոս չենք ուզեր յիշել թէ Մատամը քանի
անգամ հայելին նայեցաւ, քանի անգամ հա-
գուստները հանեց հագաւ, քալուածքին ձե-
ւերը փորձեց, աթոռին վրայ նստելակերպը,
ոտքերուն անկելը, սկառքիններուն փայլը,
եւայն եւայն, ու սկսինք խօսակցութիւնը
այն կետէն՝ որ տեղի ունեցաւ սալօնին մէջ
հիւրերու հետ:

— Շիտակը անցեալ շաբթու պարտակա-
նութիւննիս էր որ գայինք, բայց ինչպէս

եղաւ յարմարութիւն չառաւ տիկին, կ'ըսէ հիւրերէն մին կոտորուելով,

— Անցեալ չարթու զաթը ամէն օր սէպէքի էյիլի եղած էի, ամառուան երեք խաթ ֆիստաններուս համար, պիր տիւղ ֆիստան ճիները կուգային կերթային կոր ... կ'ըսէ տիկինը, չալքմէն լալկան դէմք մը շինելով:

— Այո՛ ճիշդ եղանակն է, տիկին ...

— Չորս հատ չարխա կապել տամ ըսի, պիր միւմբիւն ույմիշ չեղաւ, է՛ն սօնը Բաբիս գրել տուի քի խրկին տէյի ...

Հիւրերը իրարու երես կը նային և,

— Շատ աղէկ էք մաածէր տիկին, թէ ձեւաւոր և թէ աժան կ'ըլլայ ...

— Աժան ... ա՛ ... հիշ աժան բան չեմ խուլլանմիշ ըլլար, չիյտեմ քի աժան բան ի՞նչ ըսել է, ես տայիմա սուղ բան առնելու ալքմիշ եղած եմ տէ, աժան կ'ըսէք կոր նէ թօճաֆս կ'երթայ կոր ... հա՛, հա՛, հա՛ ...

Նոյն ատեն կառսօնը լիքէօռ մը կը բերէ.

— Կիրակոս, ինչո՞ւ եալտըզլը թախըմը չի հանեցիր, հիմա կը գիտնան քի չունինք տէյի ... տահա անցած օր առինք նէ չիյտեմ ... անոնք բերելու էիր ... ճը՛ ... ո՛ ... ո՛ ... ո՛ ... սպասուհին կը կանչէ ...

— Օռիսթէ ...

— Էլէնի՛ ... հայտէ կիթ տէ քուէք տը չին, սաչախը ֆիւշիւիւ կէթիւր քի կէօրսիւնկէր ...

— Բօլի քալա մատամ ...

— Աման տիկին զահմէթ չըլլայ, ի՞նչ կայ որ տեսնանք ...

— Թապիյէթս թօճաֆ է իշտէ, անցած օր սանկ մէյմը դուրս ելլամ ըսի, հինգ օսկի բարաս գնաց ... նա՛, սա ֆիշիւին թամամ օխտը մէճիսիէ ուղեցին ...

— Շատ աղուոր, բարով վալէք տիկին...

— Տահա երկու հատ ունի՞մ եա՛ ... առնոնք պէլքի տեսած էք տէյի բերել չի տուի...

— Աղէկ ըրիք տիկին, արդէն ժամանակ չունինք, ուրիշ տեղեր ալ պիտի երթանք...

— Անցած օր լօճա մը խրկեր էին, չիյտեմ ո՛ր ժամուռն համար, թախ շանային ճապախին օռթան չէր տէյի դրի ետ խրկեցի...

— Բէք աղէկ ըրիր տիկին ...

— Ճըո՛ ... ո՛ ... ո՛ ... ո՛ ... կառսօնը կը կանչէ,

— Մատամ՛ ...

— Ինծի նայէ Կիրակոս, առապաճիին ըսի՞ր քի իրիկուան մատամը դուրս պիտի ելլայ տէյի ...

— Այո՛ մատամ ... ըսելով դուրս կ'եկլայ և քիչ վերջը ներս մտնալով,

— Մատամ՛, պախալը եկէր է աղան հո՞ս է տէյի կը հարցնէ կոր, ծառքն ալ խոշոր տեսարակ մը կայ ...

— Էհ, մեզի հրաման տիկին, դուք հաշիւ ունիք ըսելով երբ հիւրերը կը պատրաստուին ելլալ,

— Նստեցէք ճանըմ, սխալ է, մենք պախալի հետ հաշիւ չունինք քի, ծօ՛ Կիրակոս պախալը եաղլըշ չըլլայ, աղէկ նայէ ըսելով աչքերը խոշոր խոշոր կը բանայ, որովհետեւ ինքը այդպէս չէր ապսպրած ...

Կիրակոս չուարելով ...

— Մատամ՛ ... խասապն է եղէր ... պախալը չէ ...

— Ծօ՛ նասըլ խասապ, մենք բէշին չե՞նք առնէր ...

— Ա.ֆ կ'ընես մատամ մոռցայ, իրաւ խասապը մեզի միսը կտրեց ... բանն է եկէր ... բռամաթէֆճին, սա աղային կէճէլիկ պասմա առինք նէ, տէ փարան ամիս մը ետքը եկուր առ ըսինք նէ ...

Մատամը կաս կապուտ կ'ըլլայ, մինչ հիւրերը կը պատրաստուին մեկնիլ:

— Ա.ֆ կ'ընէք, խաչոր աւանակի կտոր մանչ պահելը փորձանք է, քէշկէ փարան քիչ ըլլայ տէ շնորհքով մէկը ըլլայ, պարէ երկու օսկի՞ ալ չըլլայ այլըսը ...

— Էհ, միաք բարով տիկին, դուք ալ մեզի հրամանեցէք ...

— Շատ արզու կ'ընեմ կոր ամա, ձեր սօխախնները առապա կուգա՞յ քի ...

— Հապա՛ ...

— Էհ, անանկ է նէ կուգամ, չիւնքի ոտքով տեղ չեմ կրնար կոր երթար տէ ... ալքմիշ ըլլալու վրայ է, հիշ տեղ մը ոտքով դացած չունիմ ...

Հիւրերը սանդուխներէն վար կ'իջնեն ու Կիրակոսը դիրենք ճամբու կը դնէ, մինչ վե-

ԱՄԲԱԿՈՒՄԻՆ ԽՕՍՔԵՐԸ

ԿԸ ՀԱՍՆԵՐՆԱՄ

Կը կարծէք որ չեմ հասկնար... թէ 1907ին պիտի յաջորդէ 1908, և այս Մայիս ամսուն՝ որ մեզի քրտինքի մէջ կը ձգէ՝ Յունիսը՝ որ թերեւս ան ալ որոշած է մեզի քրտինքի պաւնէս մը ընել տալ՝ ինք ալ հանդիսատեսը ըլլալով...:

Կը հասկնամ սիրելիս թէ անձրեւ պիտի գայ, կը բաւէ որ անգամ մը երկինք նայիմ... և երկինք նայած ատենս, անպատճառ մէկու մը ոտքին վրայ կը կոխեմ և կը հասկնամ թէ այդ մէկը, անպատճառ բերանը պիտի բանայ ոչ թէ... յօրանջելու այլ... հայհոյելու և ամենաբարձր սեռականէն, ուստի, անմիջապէս բերնին կը տանիմ ձեռքս և ամուր մը կը գոցեմ, քանի որ կը հասկնամ թէ անուշ խօսքեր չէ որ պիտի ծորի անկէց... որ աղբիւր մը ըլլալէ աւելի փուռի մը բերնին մանրանկարն է...:

Ի մէջ այլոց կը հասկնամ նաեւ սիրելիս թէ օր մը՝ պիտի ոտքերս տնկեմ և նորէն կը հասկնամ թէ նոյն իսկ պատանք մը չպիտի կրնան հայթայթել և առ շատ ցաւալի բան է, քանի որ հիմակէն կը հասկնամ:

Նոյն իսկ, իբր նշանաւոր անկուտի մը ապրած ըլլալուս համար, վրաս դամբանական մը պիտի կարդայ անկուտի բարեկամներէս մին, և դամբանականին հազիւ կէսը երկած, հովը պիտի խլէ ձեռքէն և կէս կատար պիտի մնայ, այո՛, ասոնք կը հասկնամ և աղէկ կը հասկնամ և չիտտիլը ըսեմ, լալս կուգայ, բայց չեմ լար, քանի որ կը հասկընամ թէ դուք ալ ինծի նայելով պիտի լաք:

Իրաւ թէ շատ բաներ ունիմ ըսելիք հասկացողութեանս վրայ, սակայն ինծի անանկ կուգայ որ դուք ալ կը հասկնաք առաջուց՝ ըսելիքներս... երկրորդ՝ եթէ կարճ չկապելով շարունակեմ, պիտի ձանձրանաք, պիտի սկսիք յօրանջել ու բերաննիդ այնքան լայն պիտի բանաք որ՝ կզակնիդ տեղէն պիտի խախտի և բժիշկի պիտի դիմէք, պարապ տեղը դրամէ պիտի ելլաք: Այո՛, ասոնք կը հասկընամ և երեսիս ջուրովը բերանս գոցելու կը պատրաստուիմ:

ԱՆՄԵՌՈՒԿ

ՅՈՎՀ. Մ. ԱԶՆԱԻՈՐ

ՏՊԱԳՐԻԶ-ԳՐԱՎԱՃԱՌ

Կ. Պոլիս, Պապը-Ալի հասցեսի բիւ 56

.....

Կ'ստանձնէ և մաքուր տպագրութիւնով կը յանձնէ տպագրական ամէն տեսակ գործ. ուղղամտութեամբ կը կատարէ գաւառական ամէն կարգի յանձնարարութիւններ՝ թուրքերէն և Հայերէն գրքերու վրայ: Տեղական բոլոր օրաթերթերու և հանդէսներու, ինչ լեզուէ որ ալ ըլլայ, բաժանորդ կ'արձանագրէ և կանոնաւորաբար կը ղրկէ արուած հասցէներուն՝ ամսական վճարումներով և ուրիշ դիւրամատչելի պայմաններով: Ու է թերթի մը ժամանակաւոր կամ անպայման կերպով դադարման պարագային առանց թերթի չի ձգէր իր բաժանորդը և կը ղրկէ ուրիշ ու է թերթի որ ուղուի: Որպէս զի դիւրութիւն մը ըլլայ գաւառացի ընթերցողներու, հոս կը դրուի տեղական ամէնէն աւելի կարդացուած մէկ քանի թուրք թերթերու անունները իրենց ամսական բաժնեգիններով (մէջն ըլլալով թղթատարական ծախքը):

Իգտամ	օրաթերթ	15 դր.
Սապահ	»	15 »
Թէրճիմանը-Հազիզաթ	»	12 »
Սաատէթ	»	10 »
Սէրվէթի-Ֆինուս պատկերազարդ շաբաթաթերթ		15 »

Ծիշդ այս ձեւով բաժանորդ կ'արձանագրէ նաեւ բոլոր Հայ, Յոյն և տարբեր լեզուով հրատարակուած օրաթերթերու և շաբաթաթերթերու:

Վերոյիշեալ թերթերէն մէկին վեցամսեայ բաժանորդագրութիւնը մէկէն վճարողներ պիտի ստանան տուփ մը այցազարդ ինչ ձեւով և ինչ լեզուով որ ուզեն:

Դիմել՝ Յովհ. Մ. Ազնաւորի, Պապը-Ալի ճատտէսի թիւ 56:

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՂԱԼԱԹԻԱ. — Նորակազմ եռաձայն դպրաց դասը իր կարգ մը բարենպատակ կարգադրութեանց հետ, շաբթուս որոշեց ապահովագրել երգեցիկ անդամներու կոկորդը՝ 1000ական ֆրանքի: (Կիմանանք թէ ապահովագրող ընկերութիւնը պայմանագրեր է, տիւզ ըռախի չի խմել, գիշերները ժամը մէկէն վերջ դուրսը չի պտըտկիլ և օրը հաւկիթ մը կլլել անօթի փորանց. Ծ. Խ.):

ՄԿԻԻՏԱՐ. — Իրենց յետնեալ ամսականները գանձող վարժապետները կիմանանք թէ Ալէմ տաղի լէվին լէվին տուն կը փնտռեն եղեր: (Եթէ ստոյգ է, բարեկամաբար կը խրատենք զիրենք, որպէս զի հոն տեղի քաջ ճիւղնր. fukak ճիւղն չըլլայ վերջը. Ծ. Խ.):

ԱԼԷՄ-ՏԱՂԻ. — Այս տարուան հոս տեղի նուվօթին է զուռնայով քատուիլը, որ մեծ յաջողութեամբ կը կրկնուի մանաւանդ Խօռու-պաշի: Կըսուի թէ լաթէնա մը զրկողը որբ աղջիկ կարգելու չափ խէրու տէր պիտի ըլլայ: (Չափրաստի «Դուք մէջէն» փորցեցէք. Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Ծանօթ պանդոկապետ Յովակիմ աղա նկատելով որ այս տարի ընտանեկան գոտութիւններէն արուններն դարձած և վրանին դուրս տուած տիկիներ շատ պիտի գտնուին, որոշած է քացախի պանեօ մը հաստատել պանդոկին մէջ: (Վրան քիչ մը իւղով չըռողին սալանթան շատ ջուր կը խմեցընէ, պռաւօ. Ծ. Խ.):

ԳԱՏԸ-ԳԻԻԴ. — Հոս տեղի նորոյթն է օրիորդներու քննիչի պաշտօն ստանձ-

նելին: Մինչեւ հիմա գիտէինք որ վարժապետները քննութիւններու ներկայ կը գտնուէին, բայց վերջերս կիմանանք թէ մեր զարգացած օրիորդներն ալ սկսած են գրաւել այդ աթոռները:

ԲԵՐԱ. — Անցեալ իրիկուն տեղացի չիք օրիորդ մը Բըթի-Շանի պարտէզը բռնաբար ժամանակ, չի կրնալով դիմանալ նուագածուաց խումբին à tempo վալսի մը ինքն ալ վերացած, սկսաւ դառնալ, դարցնելով նաև ամենուն գլուխը դէպ ինքը:

ՆՈՅՆ. — Չորեքշաբթի գիշեր ճաշէն վերջ չոյգ մը պաղ զաւակներ պաղպաղակ ուտելու համար, խանութ մը մտած երբ փոսիկի պէս կը լզուռտէին, հեռուն նստող ուհիի մը հետ, յանկարծ ծըմբին վրայ հասնելովը, պաղպաղակը աղաղակի փոխուեցաւ:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Սթանօզ. — Գ. Փ. էֆ. — Բացառիկ թիւէն մինչեւ 35 թիւերը արդէն վեցամսեայէն շատ աւելի կընեն, ուստի պէտք է վեցամսեայ մ'ալ զրկէք, որպէս զի ուզուած թիւերը զրկուին:

Իզմիս. — Ա. Կ. էֆ. — Գրեցէք մեզի որպէս զի թերթերը դադարեցնենք . . . ըստ ձեր լուռ կամքին:

Պանսմա. — Գործ. — Ժամանակը լըրացած բաժնեգիրները զրկեցէք, որպէս զի շարունակենք, եթէ ոչ գրեցէք մեզ այս առթիւ:

Արսոմսկր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԴՐ. Ե. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապր-Ալի հասէսի բիւ 52.

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՈՅՐԱԳՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուլթան Հանամ, Թօփալեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկոսներով եւ գիներու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
գիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բոլորիներու
եւ տղայոց շիք եւ գիմացկուն փոքրիմ-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրշ է:

Գաւառներէն յանձնարարութիւնք

/ փութով կը կատարուին: 50—36



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՅԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեղայ պէյ խանին
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյրանէ,
Ջիւնասանէ, Հնդկաստանէ, Ճապոն եւ Ճա-
բոնէ:

Ամենէն զժուարհաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

ԿԸ ԾԱՆՈՒՅԱՆԵՆՔ ԹԷ

Մեր հրատարակութիւններէն

ՓՆԶԱԿ

Գ. ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ

Եւ

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒՆՁ

Անուն օգտաշատ դասագիրքերը

ՆՈՐԷՆ ՏՊՈՒԵՅԱՆ

Եւ կը վաճառուին սովորական գիներով
Եւ թէ՛

Համառօտ Իրագիտութիւնն ալ

նորէն պիտի լոյս տեսնէ՝

Ուսումնական Խորհուրդէն վաւերացուած

Դիմել 47, Պապր-Այի հասցեի

ՍՄԱՍՏ ԴԱԻԹԵԱՆ

Ա Պ Ա Ռ Ի Կ

6 ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԷՆ ՅԵՏՈՅ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊԱՌԻԿ
5000Է ԱԻԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական և Բարիգի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ բազմատեսակ գոհարեղէններ, օղ, մատնի, ասեղ, ևայլն. նաեւ անուններու սկզբնատառով գոհարաղարդ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձեւ շղթայներ, ասոնցմէ զատ ամէն եղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ զգեստներ, կօշիկներ ու գլխարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաեւ մուշամպա վերարկուններ, բուրդէ և մետաքսէ չրջագգեստի կերպասներ, պատրաստ ճերմակեղէններ նաեւ խասա, ամերիգան, պասմա, եւայլն. և զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ՝ լուացքի, լուսանկարի, կրամֆօն, ինչպէս նաեւ կարի (ձօնս. Նովման) ևայլն:

Ունինք նաեւ եւրոպական նորը ճաշակով պատրաստուած կահ կարասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաեւ բաղնիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օճախ և լն.:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ չահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաեւ իր ապրանք տոկունութիւնը, նրբութիւնը և աժաւորութիւնը:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

Շաբաթական և ամսական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք դիմել ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶԱՅ ՄԵԾ ՓՈՂՈՇ ԹԻԻ 13

50—25



ՐԵԻԵԼՔ ՕՐԱ-

ԹԵՐԹ ազգային, գրական եւ քաղաքական:
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլսոյ համար 80 դրուշ, գաւառներու համար 108 դրշ. և օտար երկիրներու համար 35 ֆր.:
Զեռքէ վաճառում՝ քաղաք փարա: Հասցէ՝
Ղալաթիա, Քամանատ փողոց: ԱՐԵՒԵԼՔ հրատարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խրնամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմուած խրմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներ

րով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ, օր աւուր աւելի հրապուրիչ դառնալով՝ նորանոր բարեփոխումներու շնորհիւ զորս ներմուծած է թերթին մէջ: Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ըլլալու հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար: Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, տնտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւայլն, բաց ի զրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ ու Զուարթ նօթերէ, որոնք նիւթերու ճոխ պէսպիսութիւն մը կը կազմեն: